ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«19» դեկտեմբերի 2018 թ. № 767-Լ

ՀՐԱՄԱՆ

ԴԵՊՔԻ ՎԱՅՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1106-Ն որոշման 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել դեպքի վայրը պահպանելու պարտականություն ունեցող Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների պաշտոնների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 12/19/2018 18:53:04 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
«19» դեկտեմբերի 2018թ.
թիվ 767 -Լ հրամանի

ՑԱՆԿ

ԴԵՊՔԻ ՎԱՅՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչության (այսուհետ՝ Վարչություն) տարածքային և մարզային բաժինների գլխավոր օպերլիազորներ,
2. Վարչության տարածքային և մարզային բաժինների ավագ օպերլիազորներ,
3. Վարչության տարածքային և մարզային բաժինների օպերլիազորներ: